Անկախության եւ ինքնիշխանության վերահաստատու՛մն է հայ հասարակության գերխնդիրը

ՀՀ քաղաքական վերնախավի լուռ համաձայնությամբ՝ ՀՀ Անկախության Հռչակագիրը 1993-ից սկսած մոռացության մատնվեց հասարակական ու մշակութային, ընկերային ու քաղաքական հարաբերություններում: Փոխարենը, աստիճանաբար, ի հայտ եկավ ու ձեւավորվեց հիմքից իսկ մերժելի, հոռի ու այլանդակ մի մշակույթ, որը պայմանավորված էր ՀՀ-ի ընտրած զարգացման արտաքին եւ ներքին քաղաքական ու տնտեսական կողմնորոշումներով՝ պայմանավորված եւրոպական, կովկասյան, եւրասիական ինտեգրման եւ ազատ շուկայի ընտրությամբ:

Եւրոպական ինտեգրումն ուղղորդվում է շատ որոշակի եւրոպական քաղաքական չափորոշիչներով ու պարտադրանքներով, եւրասիականը՝ ռուսականը, ուղղորդվում է տարածաշրջանային քաղաքական ու տնտեսական չափորոշիչներով: Ընդունելով երկու կողմերի առաջարկները՝ ՀՀ իշխանությունները շրջանցեցին ՀՀ Անկախության Հռչակագիրը: Քսան տարին բավարար եղավ, որ հանրությունը սկսի գրել ու խոսել ՀՀ անկախության ու ինքնիշխանության կորստի իրական վտանգի մասին, բոլոր ոլորտներում:

1994-ի զինադադարից ի վեր, մեր կյանքում հաստատված համեմատական խաղաղության պայմաններում, մոռացության մատնվեց ՀՀ Անկախության Հռչակագիրը, որի արդյունքում ունենք շատ մեծ կորուստներ: Հեռանում են հայրենիքից՝ այլակերպ ու այլանդակ անարդարությունների ու բռնությունների հետ բախվելուց հետո: Առավել ցավալի է, երբ հեռանում են կյանքից՝ նույն այդ այլակերպ ու այլանդակ անարդարությունների ու բռնությունների հետ բախվելուց հետո: Դրա վերջին զոհը դարձավ ՀՀ Ազգային բանակի սպա Վահե Ավետյանը, ով դաժանաբար սպանվեց իր արյունակցի կողմից՝ «Հարսնաքար» ռեստորանում: Հասկանալի է, որ այս սպանությունը շատ որոշակի պատիժ ու պատասխանատվություն է ենթադրում, սակայն հանրությանն այլեւս պակասում է օրենքի գերակայությունը, որն անհնար է լրացնել միայն ինքնաբուխ մի պոռթկումով:

ՀՀ իշխանությունների կանխամտածված հրաժարումը ՀՀ Անկախության Հռչակագրի սկզբունքներից հասարակությանը պարտադրում է այնպիսի հարաբերություններ, որոնց զոհը դառնում է նույն այդ հասարակությունը, եւ հասարակության յուրաքանչյուր անդամ, նույնիսկ, անկախ նրա զբաղեցրած սոցիալական - հասարակական դիրքից:

Ահա թե ինչու պետք է հստակ ձեւակերպել, որ ՀՀ-ի փրկության ուղին՝ ՀՀ Անկախության Հռչակագրի դրույթների վերագործարկումն է: Հայաստանի Հանրապետության Անկախության Հռչակագիրը բացարձակ հիմք է՝ սոցիալականության, իրավականության եւ ժողովրդավարության, անկախության եւ ինքնիշխանության հաստատման համար Հայաստանում, որի կիրառումը կարող է վերջ դնել բոլոր տեսակի անիրավություններին ու բռնություններին:

Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության Արտաքին գործերի հանձնաժողով
05.07.2012 թ.